

Սովետաճայ գրականությունը պատմություն, հատոր առաջին,
1961, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 799 էջ, գինը 1 ռ. 52 կ.:

Հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի պատմության մեջ ուրույն տեղ ունի սովետաճայ գրականությունը, որի անցած ավելի քան քառասնամյա ուղու գիտական ամփոփման կարևոր աշխատանքն է ձեռնարկել Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի սովետական գրականության սեկտորի Հրապարակի վրա է «Սովետաճայ գրականության պատմության» առաջին հատորը, որն ընդգրկում է 1920—1940 թթ.:

Հատորը գրել են. Աս. Ասատուրյանը («Հայկոր Հակորյան»), Հովհ. Վաղարշյանը («Հայ գրականությունը 1917—20 թթ.», «Ազատ Վրչտունի»), Ս. Աղարարյանը («Սովետաճայ գրականությունը 20-ական թվականներին»), «Մովսես Արազի», «Ակսել Բակունց» «Ստեփան Զորյան», «Դուրգեն Մահարի», «Մկրտիչ Արմեն»), Հր. Թափաղակյանը («Սովետաճայ գրականությունը 30-ական թվականներին»), Հ. Սալախյանը («Եղիշե Չարենց») և Ս. Մանուկյանը («Վահան Թոթովենց»), հմբագիրներն են Ս. Աղարարյանը, Էդ. Թոփչյանը և Լ. Հախվերդյանը:

Իրրոր բացվում է «Հայ գրականությունը 1917—20 թթ.» ներածական ուսումնասիրությանը (էջ 9—40): Սովետաճայ գրականության պատմությունը առաջին հատորում ժառանգազրական իմաստով բաժանված է երկու հիմնական հատվածի՝ 20-ական և 30-ական թվականներ: Յուրաքանչյուր տասնամյակի գրականությանը հատկացված է ընդհանուր բնութագրական ընդարձակ տեսություն: Այնուհետև տրված են առանձին ականավոր գրողների ստեղծագործության ծավալուն բնութագրություններ: Նյութի այսպիսի տեղաբաշխումը մի քանի քանակազարկով է սկզբունքորեն ճիշտ և նպատակահարմար՝ գրականության զարգացման ընդհանուր պրոցեսը առավել ամբողջական ներկայացնելու առումով: Սովետաճայ գրականության առաջին երկու տասնամյակները բնութագրող տեսություններն իրենց հերթին բաժանված

են չորս հիմնական մասերի՝ «Ներածություն», «Պոեզիա», «Արձակ» և «Դրամատուրգիա»:

Քննարկվող դիրքը ամբողջական և ամփոփ պատկերացում է տալիս սովետաճայ գրականության անցած առաջին քառամյա ուղու, նրա նվաճումների ու թերությունների, ստեղծագործական որոնումների և հաղթահարված դժվարությունների մասին: Ժողովրդին ծանալու կոչումն ու ազնիվ ձգտումը, լեհիսյան պարտիականությունը, նոր, սոցիալիստական կյանքի կառուցմանը ակտիվորեն մասնակցելու պատրաստակամությունը եղել են սովետաճայ գրականության հասունացման գրավականը, համախմբել են գրական տարրեր սերունդների ուժերը, նպաստել նրանց զազափարական մակարդակի բարձրացմանն ու գրական վարպետության կատարելագործմանը: Հենց այս տեսանկյունով էլ գրքում վերլուծված է գրականության զարգացման ընթացքը և գնահատված գրողների ստեղծագործությունը:

«Սովետաճայ գրականությունը 20-ական թվականներին» տեսության մեջ (էջ 43—219) քննարկվում են սովետաճայ գրականության սկզբնավորման և զարգացման առաջին շրջանի հարցերը, որոնք առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում, եթե նկատի ունենանք բուռն վեճերով, հակասական, հաճախ իրարամերժ կարծիքներով ու տեսակետներով, որոնումներով ու մոլորություններով և միաժամանակ սկզբունքային նշանակություն ունեցող ստեղծագործական նվաճումներով հատկանշվող գրական կյանքը: Դա մի ժամանակաշրջան էր, երբ առաջնակարգ նշանակություն էին ստացել ստեղծագործական մեթոդի, գրականության զարգացման հեռանկարների, անցյալի ժառանգության նկատմամբ ունենալիք վերարբնությունի, նորարարության, գրական նոր սերնդի դաստիարակության խնդիրները: Սրանցից յուրաքանչյուրը մանրամասն քննարկվում է «Սովետաճայ գրականությունը 20-ական թվականներին» տեսության «Ներածու-

թյուն» բաժնում: Այստեղ հանգամանորեն տրրված է պրոլետարական առաջին գրական խմբակների («Սրերը», «Մուրճ», «Դարբնոց», «Բուրա»), գրական կազմակերպությունների ու միությունների (Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա, «Հոկտեմբեր», «Նոյեմբեր») գործունեության վերլուծությունը, բուռն ներգրական պայքար՝ իր էական տեղեկեցներով ու գրսևորումներով: Սուր և դիպուկ բնագատության են ենթարկված «ձախ», ֆուտուրիստական տեսակետները, անցյալի ժառանգության նկատմամբ եղած նիհիլիստական վերաբերմունքը: Առանձնապես մանրամասնորեն է բնութագրված «Սրերի» հայտնի գեկլարացիան: Ընդհանրապես պետք է նշել, որ ժամանակաշրջանի գրական պրոցեսը գիտված և գնահատված է գրական-պատմական տեսանկյունից, մի հանգամանք, որն օգնել է իրական գույներով վերարտադրելու սովետահայ գրականության կազմավորման ու զարգացման պատկերը, գիտական վերլուծության ենթարկելու և արժեքավորելու գրական խմբավորումների գործունեությունը, գրականության զարգացման հիմնական տեղեկեցները:

Առանձին բաժին է հատկացված հայ մարքսիստական գրաքննադատությանը, որն արդյունավետ աշխատանք է կատարել սովետահայ գրականության սկզբնավորման շրջանում գրողների պաղափարական-գեղարվեստական դաստիարակության, գրական ուժերի համախմբման, անցյալի կուլտուրական ժառանգության նկատմամբ ճիշտ վերաբերմունք մշակելու լուրջ ուժով: Ընդդիմ է հեղինակի այն ելակետը, թե գրական քաղաքականության կենսագործման համար մեղանում հիմք են ծառայել Վ. Ի. Լենինի «Պարտիական կազմակերպություն և սյարտիական գրականություն» ծրագրային հոդվածը, Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի գրականագիտական ափանգները: Այնուհետև ցույց է տրված այն խոշոր դերը, որ կատարել է Ալեքսանդր Մյասնիկյանը սովետահայ գրականության զարգացման գործում՝ և՛ իրրի գրական կազմակերպիչ ու ղեկավար, և՛ որպես բնագատ ու տեսաբան: Մանրամասնորեն վերլուծված է Ա. Կարինյանի գրականագիտական գործունեությունը, նշված է այն դերը, որ կատարել են Ա. Մուսվաթյանը, Հ. Գյուլիբեկյանը, Ա. Հովհաննիսյանը սովետահայ կուլտուրայի զարգացման գործում: Իրրի թերություն պետք է նշել, որ շատ թույլիկ, «գեկլարատիվ» ճիշտ տակուության են արժանացել Հ. Սուրխաթյանը, Պ. Սպիկեցյանը, Ց. Խանդավյանը, Ս. Հակոբյանը, Մ. Արեղյանը, Ա. Տերտերյանը և մի շարք այլ գրականագետներ ու բնագատներ, որոնք նշանակալից աշխատանք են կատարել գրակա-

նագիտության ասպարեզում: Անհրաժեշտ էր տալ գրական բնագատության կատարած դերի հանգամանալից վերլուծությունը, կանգ առնելով ինչպես գրականի, այնպես էլ թերությունների ու սխալների վրա:

Սովետահայ գրականության ձևավորումն ու զարգացումը տեղի էր ունենում ուսու գրականության և սովետական մշակու ժողովուրդների գրականությունների փոխադարձ ազդեցության ու փոխադարձ հարստացման պայմաններում: Այս տեսակետից ճիշտ է վարվել հեղինակը սովետահայ գրականությունը դիտելով որպես սովետական միասնական գրականության ազգային ջոկատներից մեկը: Սոցիալիստական հայ գրականության ստեղծման գործում խոշոր դեր խաղացին հատկապես սոսական սովետական գրականության տրագիկաները: Գրքում զգալի տեղ է հատկացված Մ. Գորկու և Վ. Մայակովսկու կատարած դերին սովետահայ գրականության կազմավորման մեջ: Ըստ ամենայնի արժեքավորված են նաև Վ. Բրյուսովի, Ա. Լունաչարսկու բարեկամական կապերը հայ գրականության և արվեստի գործիչների հետ:

Սովետահայ գրականությունը 20-ական թվականներին տեսության մեջ այնուհետև բրնարկվում են պոեզիայի, արձակի և դրամատուրգիայի ձևավորման ու զարգացման հարցերը, կոնկրետ վերլուծության է ենթարկվում սովետական շրջանի առաջին տասնամյակի գրական արտադրանքը: Կարևոր է ընդգծել, որ հեղինակը տվյալ շրջանի գեղագիտական բմբրունումների ուսումնասիրումը գուցակցել է կոնկրետ գրական երկերի իր բնություն հետ, հաշվի առել գրական մթնոլորտի, գրականության զարգացման տեղեկեցների յուրահատկությունը՝ կապված ժամանակի պահանջների, գրականության հասարակական դերի բարձրացման նոր խնդիրների հետ: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տվել գրական պրակտիկան դիտել առավել ամբողջականորեն ու բազմակողմանի, ոչ միայն ցույց տալ, այլև բացատրել թերությունները, սխալներն ու մոլորությունները, հետամուտ լինել գրականության աճման ու հասունացման բնագետուր պրոցեսին, մի խոսքով՝ ստեղծել գրականության գիտական պատմությունը: Հաշվի առնելով երբեք հիմնական գործունեի գեղարվեստական տրագիկաները, գրական փոխադարձ ազդեցությունները և ժամանակի առաջադրած գեղագիտական նոր պահանջմունքները, հեղինակը ցույց է տալիս գրական պրոցեսի օրինաչափությունները:

Ինչպես ամբողջ սովետական գրականության, այնպես էլ սովետահայ գրականության

մեջ 20-ական թվականները համարվում են «բանաստեղծութեան ժամանակը»։ Նոր դրականութեան դարգացման կենտրոնական հարցերը առավել սուր և ընդգծված կերպով դրվում ու լուծվում էին պոետական ստեղծագործութեան մեջ։ Այս առումով քննարկվում են գեղարվեստական նոր ձևերի սրտման, նորարարութեան, ձևի և բովանդակութեան ներդաշնակութեան պրոբլեմները 20-ական թվականների սկզբի սովետահայ պոեզիայում (Ս. Չարենց, Ա. Կլեյմս, Գ. Արուստի, Կ. Արուստի և ուրիշներ)։ Գրական նյութը գիտականորեն մատուցված է և՛ թեմատիկ, և՛ ժանրային տեսակետից։ Հեղինակը ցույց է տալիս վերացական-կոսմիկական պոեզիայի տեղեկանքների հաղթահարման և ուսուցիչական-հոգեբանական ուղու վրա կանգնելու բուն ընթացքը, սոցիալիստական շինարարութեան կոնկրետ խնդիրներ արժարժելու ժողովրդի կյանքի ու պայքարի գեղարվեստական տարեցրությունը ստեղծելու այն առողջ միտումը, որը գրականութեան դարգացման հիմքն էր, նրա հետագա վերելքի դրավականը։ Արդիական մեծ հարցերը այս շրջանում դառնում են ոչ միայն Հ. Հակոբյանի և Ս. Չարենցի ստեղծագործութեան հիմնական նյութը, այլև սովետահայ ողջ պոեզիայի ընդհանուր պաթոսը։ Առաջնակարգ նշանակություն են ստանում լենինյան թեմատիկայի մշակումը, սեռային-ազատագրական շարժումների արտացոլումը, կապիտալիստական Արևմուտքի և գաղութային Արևելքի, ժողովուրդների բարեկամության և միջազգային բանվորական շարժման պրոբլեմը, սոցիալիստական շինարարութեան գեղարվեստական մարմնավորումը։ Բազմակողմանիորեն անդրադառնալով 20-ական թվականների սովետահայ պոեզիայի դարգացման ընթացքին, հեղինակը նախում է ճիշտ եզրակացություն, նշելով, որ տուրիստական ազատագրվելով սխեմատիզմի, տեխնիցիզմի, ֆորմալիզմի ազդեցություններից, վճռական շրջադարձ կատարելով գեղի դարաշրջանի հասարակական մեծ ու հրատապ խնդիրներն ու ժամանակակից մարդու հոգեբանությունը, սովետահայ պոեզիան հասնում է գաղափարական ու գեղարվեստական նոր նրվաճումների։

Քննարկելով 20-ական թվականների սովետահայ արձակի և դրամատուրգիայի հարցերը, հեղինակը ցույց է տալիս նոր թեմատիկայի բարացման բարդություններն ու զժվարությունները, դրանց հաղթահարումը կոնկրետ-ստեղծագործական պրակտիկայում։ Մանրամասն վերլուծված են Ստ. Զորյանի, Ա. Բակունցի, Գ. Գեմիլիսյանի այդ շրջանի գործերը, արժեքավորված է նրանց բերած նորությունը թեմատիկայի, գաղափարական բովանդակության և

գեղարվեստական ձևերի նարտացման առարկայում։ Հատուկ ուշադրություն է դարձված երգիծանքի ժանրին՝ և՛ արձակի մեջ, և՛ դրամատուրգիայում։ Ամփոփ կերպով խոսվում է նաև Մաթևոս Գարրինյանի, Հեռ-Կամսարի, Գերոն Թորգոմյանի, Միրայել Մանվելյանի և մի շարք այլ գրողների ստեղծագործական ուղու, նրանց գրական վաստակի մասին։ Արձակն ու դրամատուրգիան գիտելով իրեն ընդհանուր գրական պրոբլեմի բաղկացուցիչ մասեր, հեղինակը ցույց է տալիս դրանց դարգացման հետաքրքրական ու զժվարին ընթացքը։ Անցումը սոցիալիստական գաղափարների վերացական գեղարարականներից գեղի արդիական թեմաների, հոգեբանական մշակում, ժամանակակից հերոսի պրոբլեմի առաջադրումը, թեմատիկայի, ժանրերի ու ոճարանական սկզբունքների ընդլայնումն ու հարստացումը հասցրին սոցիալիստական սեպիզմի սկզբունքների արմատավորմանը։ Սովետահայ արձակն ու դրամատուրգիան տասնամյակի վերջում դուրս եկան դարգացման լայն ճանապարհի վրա։

Հաջորդ տասնամյակի գրականության հարցերը քննության են ենթարկված «Սովետահայ գրականությունը 30-ական թվականներին» տեսության մեջ (էջ 501—625)։ Այս շրջանում սովետահայ գրողներն ու քննադատները ճիշտում էին գնահատել նախորդ տարիների գրական արտադրանքը, նշել գրականության դարգացման հետագա ուղիները։ Նոր ուժով ընդգծվում է գրականության և կյանքի փոխազդեցությունը, նրանց սերտ կապի, սոցիալիստական իրականության նոր երևույթների, նոր մտքի ներքին հարստությունն ու գեղեցկությունը բարձր արվեստով արտացոլելու կենսական խնդիրը։ Այս առումով բոլոր ամենայնիք արժեքավորված են Ս. Չարենցի «Էպիկական լուսարաց» գիրքն ու նրանում առաջադրված էսթետիկական սկզբունքները, վեր է հանված սեծ գրողի դերը սոցիալիստական սեպիզմի գրականության ստեղծման գործում։ Այստեղ գնահատված են նաև Գ. Գեմիլիսյանի, Ստ. Զորյանի, քննադատ Հ. Գյուլիսյանի և մյուսների հոգեվածները գրականության դարգացման նարքերի վերաբերյալ։

Ճիշտ է նկատում հեղինակը, թե վերակառուցման շրջանի հայ գրականագետներ առաջին իսկ տարիներից դրսևորում էր դարգացման ու հասունացման առողջ, խոստումնալից տեղեկանքներ, բացահայտում գրական նոր անհատականություններ, բերում գրական ժանրերի, ոճերի ու թեմաների բազմազանություն։ Իրարում ընդգծված է այն հեղաշրջող նշանակությունը, որ ունեցավ Համլ(ր)Պ Կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի «Իրական-գեղարվեստա-

կան կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշումը: «Ներածություն» մեջ տրված է նաև 1933—34 թթ. Հայաստանում գրական ասպարեզում ծայրահեղորեն բորբորված խմբակային-թայֆայական պայքարի գնահատականը: Այդ փնտառար վեճերը ծանր հետևանքներ ունեցան գրականության համար: Այնուհետև հեղինակը կանգ է առնում 1934 թ. օգոստոսին հրավիրված Հայաստանի գրողների առաջին համագումարի աշխատանքների վրա: Համագումարն ամփոփեց սովետահայ գրականության ձևոր բերած ակնառու նվաճումները միաժամանակ առաջադրելով նոր պահանջներ ու խնդիրներ (գրական քննադատության բարելավման, բովանդակության և ձևի ներդաշնակության և այլ հարցեր):

Ազգային ուսուցիչականների, այդ թվում նաև Սովետական Հայաստանի գրական-ստեղծագործական կյանքի վրա խոր ազդեցություն ունեցավ սովետական գրողների առաջին համագումարը (1934): Գրքում զգալի տեղ է հատկացված համագումարի աշխատանքների բնութագրմանը, հայ պատվիրակների (Ա. Շիրվանզադեի, Ն. Չարենցի, Ա. Բակունցի, Գ. Գեմիրճյանի, Զ. Նսայանի) ելույթների մեջ արծարծված հարցերին: Զգալի չափով առողջացավ գրական մեթոդորար, մեղմացավ խմբակային պայքարը: Բայց շուտով անհատի պաշտամունքի հետևանքով սկսված ուսուցիչականները յուրք փնտ հասցրին սովետահայ գրականությանը ժողովրդի կյանքի ու պայքարի գեղարվեստական արտացոլումը գրականության մեջ շատ հաճախ փոխարինվում էր Ստալինի անձի գովերգություն: Սակայն, ինչպես ճիշտ կերպով բնորոշված է «Ներածություն»-ում՝ «մեզանում չղաղարեց և չէր էլ կարող զղաղարել գրական-ստեղծագործական կյանքը, բոլոր դժվարությունների միջով գրականության ավազ և կրտսեր սերնդի տաղանդավոր մարդիկ, գրական մոլորություններին այս կամ այն չափով սուրբ տալով հանդերձ, ստեղծում էին իսկական սովետական գրականություն՝ ներկայի և պատմական անցյալի մասին» (էջ 530):

«Սովետահայ գրականությունը 30-ական թվականներին» տեսության հաջորդ բաժիններում տրված է պոեզիայի, արձակի և դրամատուրգիայի բնույթի պատկերը, բնութագրված են գրական շարժման ներքին օրինաչափությունները և առանձնահատկությունները պոեզիայի և արձակի ասպարեզում:

Անդրադառնալով նախորդ տասնամյակի բանաստեղծական արտադրանքի և արձակ գործերի գնահատման ու արժեքավորման հետ կապված մի շարք բանավեճերին, հեղինակը գրական կոնկրետ նյութի հիման վրա բնորոշ

ծում է գարգացման նոր փուլում սովետահայ գրականության մեջ առաջացող արմատական փոփոխությունները, այն նվաճումները, որ ձևոր են բերում տարրեր սերնդի սովետահայ գրողները: Լինելով նախորդ շրջանի լավագույն տրագիկոսների օրգանական շարունակությունը, դիտում է հեղինակը, 30-ական թվականների սովետահայ պոեզիան գարգանում և հարստանում էր երեք հիմնական ազդակների, երեք հիմնական ակունքների շնորհիվ. սերտ կապը կյանքի հետ, անցած ժամանակաշրջանում սովետական ողջ պոեզիայի ստեղծած ուսանելի փորձը և ինչպես հայ, այնպես էլ ուսական ու այլազգի բանաստեղծական կոլտուրայի անցյալի առաջավոր ավանդների օգտագործումը:

Պատահական չէ, որ 30-ական թվականներին պոեզիայի հիմնական թեման դառնում են աշխատանքը, սոցիալիստական վերափոխությունները գյուղում և քաղաքում, նոր մարդու սովետական-բարոյական հարուստ ու բազմազան աշխարհը: Հաղթահարելով գեղարվեստական բնույթի յուրք թերությունները, բանաստեղծները արտացոլում էին սովետական իրականությունը, մարդկային նոր հարաբերությունները՝ իրենց կոնկրետ դրսևորումներով: Ձևավորվում էր Սովետական Հայաստանի բանաստեղծական կերպարը՝ թե՛ Լյիկական կտավներում և թե՛ քրեարական երգերում (Ն. Չարյանի, Գ. Սարյանի, Գ. Մահարու, Վ. Ալադանի, Վ. Նորենցի, Ս. Տարոնցու, Ս. Վահանու, Հ. Շիրազի, Վ. Գրիգորյանի, Է. Գալստյանի, Թ. Հուրյանի, Ա. Գալստի, Զ. Կոմունու և ուրիշների բանաստեղծությունները, պոեմներն ու բալլադները): Հեղինակն իրավացիորեն բնորոշում է, որ սովետահայ պոեզիայում գնալով ամբողջանում և կենսական ուժ էր ստանում մեր հայրենիքի ու օրգոլուրդների ապագայի, կոմունիզմի թեմաս, որին բանաստեղծներից յուրաքանչյուրը արձագանքում էր իր ձայնով, բայց միշտ ոգևորությամբ ու քերականությամբ: 30-ական թվականների պոեզիայի հասունացման ու ներքին հարստացման բնթացքը բացահայտելու առումով գրքում գրականագիտական հետաքրքիր գնահատական են տալիս Ն. Չարենցի «Գանգրահեր տղան», «Մեծ առօրյան», Ն. Չարյանի «Թուշանի քարափը» երկերը: Այս բաժնում հակիրճ, բայց ամփոփ կերպով տրված է Վ. Նորենցի, Ալադանի, Ս. Տարոնցու անցած քստեղծագործական ուղին, բնութագրված է նրանց գրական վաստակը ամբողջության մեջ: Նույնպես բնութագրական հատված «Երամատուրգիստ»-ում՝ Վ. Վաղարշյանին և Մ. Զանա-

30-ական թվականների սովետահայ արձակի զարգացման հարցերը ես ըննարկված են լավական հանգամանորեն: Զգալի տեղ է հատկացված ակնարկի ժանրին, որն այդ ժամանակ սոցիալիստական շինարարության հետ կապվելու «ամենատպալանալի» միջոցն էր մեր գրողների համար: Այնուհետև ընդթափանցված են արձակի մյուս ժանրերում ձևոր բերված նվաճումները, նոր թեմատիկայի յուրացման հետ կապված դժվարությունները, այդ առարկաներում թույլ տրված վրիպումներն ու գեղարվեստական սայթաքումները: Սովետահայ արձակի հասունացման վկայությունն էր վիպագրության յուրյան աճը 30-ական թվականներին: Գրքում բոլոր արժանիւններն զննահատված և արժեքավորված է Գ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Ա. Բակունցի, Ն. Զարյանի, Վ. Թոթովենցի, Մ. Արազու, Մ. Արմենի, Գ. Մահարու լայն կտավի գործերի՝ վեպերի ու վիպակների գրական-պատմական դերը:

Համեմատաբար թուուցիկ և հապճեպ ընդմիջված է ստացել գրքում 30-ական թվականների սովետահայ դրամատուրգիան: Ընդհատ է գրականության այս տեսակի շունեցավ այնպիսի խոր ու բազմակողմանի զարգացում, ինչպես պոեզիան ու արձակը, մեծ չէր և դրամատուրգիայով զբաղվող հեղինակների թիվը, բայց, այնուամենայնիվ, անհրաժեշտ էր հանգամանալից խոսք ասել այդ ժամանակաշրջանի դրամատուրգիայի, նրա զարգացման կական դժվարությունների մասին՝ գրական արտադրանքի բազմակողմանի վերլուծության հիման վրա:

Ընդհանուր առմամբ, ե՛ր 20-ական, ե՛ր 30-ական թվականների սովետահայ գրականությանը նվիրված ընդարձակ տեսությունները գրված են հաջող և համակողմանի պատկերացում են տալիս գրական պրոցեսի, զարգացման տեղեկությունների, մի խոսքով՝ այդ ժամանակահատվածի սովետահայ գրականության պատմության մասին: Այդ տեսություններն էլ հենց, մեր կարծիքով, գրքի ամենաարժեքավոր մասերն են:

«Սովետահայ գրականության պատմության» առաջին հատորում առանձին ուսումնասիրություններ են նվիրված Հ. Հակոբյանին, Ե. Զարենցին, Մ. Արազուն, Ա. Բակունցին, Ա. Թոթովենցին, Ստ. Զորյանին, Վ. Թոթովենցին, Գ. Մահարուն և Մ. Արմենին: Այս մենագրությունների նպատակն է՝ արժեքավորել ժամանակաշրջանի աչքի ընկնող գրողների գրական վաստակը և դրանով իսկ առավել ամրոգական դարձել սովետահայ գրականության զարգացման ընդհանուր պատկերը: Հենց այստեղից էլ ուզում ենք սկսել մեր դիտողություն-

ները: Ոչ որ չի կարող ժխտել մենագրական բնույթի ուսումնասիրությունների անհրաժեշտությունը գրականության պատմությանը նվիրված գրքում: Սակայն դրանց ներկայությունը պատճառաբանված և նպատակային է դառնում այն դեպքում միայն, եթե առանձին գրողների ստեղծագործության վերլուծությունն ու արժեքավորումը սերտորեն շաղկապվում են գրականության ամբողջական փուլի զարգացման բուն ընթացքին, լրացնելով և ամրոգացնելով մենագրություններին նախորդող ընդհանուր բնույթի տեսությունները: Դժբախտաբար, գրքում ամփոփված մենագրությունները մեծ մասամբ չեն կատարում իրենց հատկացված այդ կական դերը: Նրանք ավելի շուտ թողնում են առանձին, ինքնամփոփ ուսումնասիրությունների ապավորություն և դրանով իսկ որոշ չափով դառնում ինքնանպատակ: Հեղինակները մեծ մասամբ համոռոտել են նախկինում հրատարակված իրենց ուսումնասիրությունները և գրեթե նույնությամբ գեղեցիկ «գրականության պատմության» մեջ: Մինչդեռ գործի հաջողության շահերը պահանջում էին նյութի մոտենալ նոր գրականության պատմության գրելու տեսանկյունից և համապատասխանորեն փոփոխել, վերակառուցել, որոշ դեպքերում նույնիսկ նորից գրել արդեն գրածն ու հրատարակածը: Այսպես առած՝ «մեխանիկական մոտեցումը» լրջորեն վնասել է գրքին: Դրա հետևանքով 20-ական և 30-ական թվականների սովետահայ գրականությանը նրվելված ընդհանուր բնույթի ընդարձակ տեսությունները, որ զբաղեցնում են գրքի ծավալի ավելի քան մեկ երրորդը, իրոք թողնում են գրականության պատմության տպավորություն, իսկ մյուս, ավելի մեծ մասը բոլոր էությունները վերածվել է առանձին գրողների ստեղծագործական դիմանկարների յուրատեսակ մի ժողովածուի: Սա լուրջ թերություն է ոչ միայն կառուցվածքային տեսակետից, բանի որ վերջին հաշվով տուժել է գրականության պատմության ամրոգականությունը:

Մեզ թվում է, որ հիմնականում վերոհիշյալ սխալից է պալիս նաև մեկ այլ թերություն: Խոսքը վերաբերում է զգալի թիվ կազմող կրկնություններին և առանձին գրական երկերի տրված հակասական գնահատականներին: Նախ կրկնությունների հարցը: Մի շարք գրողների միևնույն գործերի մասին խոսվում է գրքի տարբեր մասերում: Այսպես, Ստ. Զորյանի «Հեղկոմի նախագահը», «Գրադարանի աղջիկը» վիպակները «ուշագրության կենտրոն» են դարձել ե՛ր 20-ական թվականներին նվիրված տեսության, ե՛ր «Ստեփան Զորյան» մենագրության մեջ (էջ 172—174, 658—670 և այլն): Ի դեպ՝ Զորյանի հերոսներին ուսումնասիրությանը

հայտնի հերոսների հետ համեմատելու միտումը ևս մենագրության մեջ հասցրել է այդ «հնարանրի» որոշակի կրկնության և տվյալ ղեպում ստեղծել ոճական միօրինակություն. «Տխուր մեղրիկ» պատմվածքների շարքում Զորյանը նշարագրում է «բուրժուական հասարակությունից մերժված, թշվառ ու խեղճ մարդկանց» ևսլկական ևկակի ևկակիլիչների սահմանափակ, նեղ աշխարհը...» (էջ 634)։ «Ի դեմս պարոն Կարապետի, Ստ. Զորյանը ստեղծել է պրիշիբենների և բելիկովների հայկական տարբերակին...» (էջ 639) և այլն։ Մ. Արաղու «Անցվորներ» շարքի պատմվածքները նույն տեսանկյունից են քննարկվում գրողին նվիրված ուսումնասիրության և 20-ական թվականների արձակի տեսության մեջ։ Այստեղ բանը հասնում է գրեթե բառացի կրկնության։ Համեմատեցեր, օրինակ, հետևյալ երկու հատվածները. 1. «Մի շարք պատմվածքներում, որոնք խմբավորված են «Անցվորներ» վերնագրի տակ, Մովսես Արաղին բացահայտում է հոգեբանական այն գալարումներն ու ցնցումները, որ ունենում են հին աշխարհի վերջին բեկորները...» (էջ 178)։ 2. «Պատմվածքների առաջին շարքը՝ «Անցյալի նիրհը» «Հին ժամացույց», «Զառիթափ», «Դեղին նստարանի վրա», «Տեսիլքը», «Փուշ Արելը» և այլն,—որոնց «Անցվորներ» խոստովանելու վերնագիրն է տվել արձակագիրը,—ընթերցողի առաջ բացահայտում են հոգեբանական այն յուրահատուկ գալարումներն ու ցնցումները, որ ունենում են հին կյանքի վերջին բեկորները...» (էջ 297—298)։ Համառոտ նույն տիպի կրկնություններ կան նաև «Ակսել Բակունց» ուսումնասիրության և 20-ական թվականներին նվիրված տեսության «Արձակ» բաժնում։ «Մթնաբոք» ժողովածուի պատմվածքներով Բակունցը «ցրում է նահապետական կյանքի ձևերի կարծեցյալ «դեղնակայան» ոռմանտիկական առասպելը».—կարգում ենք 160-րդ էջում։ Ահա և 440-րդ էջում առավածը նույն ժողովածուի մասին. «Բակունցը ուսլխոտ-գրողի նրբազգացությանը ցրում է «իդեալագործված» կյանքի առասպելը...» (նմտ. նաև 156 և 438, 465 և 589, 454 և 603 և այլ էջեր)։

Բնականաբար, «Սովետահայ գրականության պատմության» մեջ կենտրոնական տեղ է հատկացված Նդիշն Չարենցին։ Մեծ արվեստագետի և քաղաքացու ստեղծագործության մասին հանգամանորեն խոսվում է 20-ական և 30-ական թվականների սովետահայ գրականության տեսությունների մեջ, գրքի ամենածավալուն ուսումնասիրությունը (85 էջ) նվիրված է նրան։ Չի կարելի գոհունակությամբ չնշել, որ գրքում բաղմակողմանիորեն բացահայտ-

ված է Ն. Չարենցի կատարած անփոխարինելի դերը սովետահայ գրականության ձևավորման ու զարգացման մեջ, վերլուծված և արժեքավորված է նրա գրական հարուստ ժառանգությունը։ Սակայն այստեղ էլ որոշ չափով «սպափորությունը փշացրել են» նույն շարաբաստիկ կրկնությունները։ Տեսությունների և ուսումնասիրության մեջ նույն տեսանկյունով են քննարկված և գնահատված «Ամենապոեմը» (էջ 108—112 և 345—346), «Կապկազ թամաշա»-ն (էջ 205—207 և 354—356), «Երկիր Նաիրի»-ն (էջ 166—167 և 356—357) և այլն։ Հովհ. Թումանյանին նվիրված Չարենցի քառյակը երկու անգամ բերված է գրքում միևնույն միտքը հաստատելու համար և երկու ղեպում էլ րոտացել է նույն մեկնարանությունը (էջ 394 և 544)։ Կրկնություններ շատ կան նաև 20-ական թվականների տեսության՝ Հակոբ Հակոբյանին նվիրված էջերում և ուսումնասիրության մեջ (էջ 125—128 և 264—268 և այլն)։ Սահմանափակվենք բերված օրինակներով և նորից բնագծենք, որ այս կրկնությունները հիմնականում առանձին գրողներին նվիրված մենագրությունները գրականության պատմության մեջ մեխանիկորեն ներմուծելու հետևանք են։ Եթե նժան «ներմուծմանը» փոխարինենք օրգանական ներդաշնակումը և ամբողջ գիրքը խմբագրվեր ավելի ուշագիր, անհարկի կրկնությունների մեծագույն մասից կարելի կլիներ հեշտությամբ խուսափել։

Նույն պատճառներով պետք է բացատրել նաև տեսությունների մեջ, առանձին գրողներին նվիրված ուսումնասիրություններում տեղ գտած մի շարք հակասական ձևակերպումներն ու միևնույն ստեղծագործությանը տրված իրարամերժ գնահատականները, որ արդեն նշվել է քննադատության կոդիֆից. Իհարկե, յուրաքանչյուր գրականատես կամ քննադատ այս կամ այն գրական ստեղծագործության, գրական երևույթի մասին կարող է ունենալ իր սեփական կարծիքը, որը կոնկրետ ղեպում կարող է և համարնկնել ուրիշների տեսակետին։ Բայց երբ գրվում է գրականության պատմություն և այն ներկայացվում է իբրև կոլեկտիվ աշխատանք, անհրաժեշտ է մշակել միասնական կարծիք և տարակուսանքի մեջ չթողնել ընթերցողին։

Միանգամայն ճիշտ են վարվել հեղինակները և՛ տեսությունների մեջ, և՛ դիմանկարներում խոսելով առանձին գրողների ստեղծագործություններում տեղ գտած թերությունների, սխալների ու վրիպումների մասին, այլապես միակողմանի կներկայացվեր գրականության պատմությունը։ Բայց, դժբախտաբար, միշտ չէ, որ այդ երևույթների մասին գրված է հանգամանորեն։ Որոշ ղեպերում չեն բացատրված

սխալների ու վրիպումների պատճառները, ցույց չի տրված դրանց հետագա հաղթահարումը հեղինակի կողմից: Այստեղ է, որ գրքի այդպիսի էջերը տուժել են համոզականության տեսակետից: «Հոկտեմբերյան ռեոլյուցիան միանգամից հասունացնում է բանաստեղծին,—կարդում ենք՝ Վ. Տերյանի մասին,—իշրում նրա տառանումների ու տարակուսանքների շղթան, իսկառ վերացնում ստեղծագործության մեջ եղած հակասությունները» (էջ 36): Ի՞նչ տառանումների ու հակասությունների մասին է խոսքը՝ չի բացատրված: 20-ական թվականների գլխիվան քննադատությանը նվիրված հատվածում նշված է, որ Պ. Մակինցյանը, 3. Խանգաղյանը, 2. Սուրխաթյանը «թույլ են տվել մեթոդոլոգիական որոշ սխալներ» (էջ 89), բայց թե ինչո՞ւմ էին արտահայտվում այդ սխալները, ե՞րբ, ո՞ր հարցում, ի՞նչ պատճառներով՝ ոչ մի պատասխան: Զի բացատրված նաև այն հայտարարությունը, թե «պատմական թեմաներով գրված սոնետների շարքում բանաստեղծը (Ս. Տարոնցին) տուրք է տալիս անցյալի իդեալականացմանը» (էջ 578):

Կարծում ենք, որ անհրաժեշտ էր ավելի շատ տեղ հատկացնել սովետահայ գրական մամուլի պատմությանը: 20-ական և 30-ական

թվականներին գրական պարբերականները եղել են ստեղծագործական վեճերի ու քննարկումների կարևոր կենտրոններ, որոշակիորեն տոն են տվել գրական մթնոլորտի ստեղծմանը, մի խոսքով՝ հանդիսացել են ժամանակի գրական կյանքի հայելին: Իհարկե, չի կարելի ասել, թե գրական մամուլի մասին գրքում բոլորովին չի խոսվում: Տեսությունների մեջ ակնարկվում են որոշ գրական հանդեսներ ու թերթեր, բայց դա, մեր կարծիքով քիչ է և ոչ բավարար: Հարկավոր էր յուրաքանչյուր տասնամյակի տեսության մեջ առանձին բաժին նվիրել գրական մամուլին:

Վերջում ուղում ենք ընդգծել, որ նշված թերություններն ու վրիպումները չեն կարող նւեմացնել այն նշանակալից գործը, որ կատարված է սովետահայ գրականության պատմության ստեղծման ուղղությամբ: «Սովետահայ գրականության պատմության» առաջին հատորը, ամբողջությամբ վերցրած, արժեքավոր և օգտակար ուսումնասիրություն է: Մեր դիտողություններն ու առաջարկները բխում են գրքի երկրորդ հատորը ավելի կատարյալ ու անխեղի տեսնելու ցանկությունից:

Լ. ՖԵԼԵՅԱՆ.

Е. К. САРКИСЯН. *Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны*. Ереван, 1962, Издательство Академии наук Армянской ССР, 478 стр., цена 1 р. 77 к.

Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ, *Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին*, Երևան, 1962, Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 478 էջ, գինը 1 ռ. 77 կ.:

Առաջին համաշխարհային պատերազմի պատմությանը, ինչպես հայտնի է, նվիրված են ոչ քիչ թվով ուսումնասիրություններ: Այդ հարցի առթիվ հանդես են եկել շատ հեղինակներ թե՛ Սովետական Միությունում, թե՛ արտասահմանում, հրատարակված են բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր, հուշեր և այլ ելույթներ: Սակայն ավելի պրոբլեմի հետ կապված մի շարք հարցեր գեղեսի ևն մշակված անհրաժեշտ խորությամբ և լիակատարությամբ: Դրանք թվին պետք է դասել և այն թեման, որին նվիրված է Ե. Ղ. Սարգսյանի մենագրությունը:

Ուսումնասիրության մեջ քննության է առնվում Անդրկովկասի նկատմամբ թուրքական կռապարության վարած օգրեսիվ քաղաքականությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին: Գիրքը ներածությունից և վերջաբանից բացի պարունակում է վեց գլուխ: 1. Օսմանյան կայսրությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: 2. Նրիտանորդ թուրքերի գործակալությունը Անդրկովկասում պատերազմի նախօրյակին: 3. Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մասնկր: 4. Կովկասյան ապստամբականը 1914—1917 թթ.: 5.